| ԲԻԶՆԵՍ ԱՎՏՈ | | | | |
|---|---|---|---|---|
| **Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող վարկերի և վարկային գծերի պայմանները և սակագները** | | | | |
| **1** | **Վարկի պայմաններ** | **Վարկ** | | **Վարկային գիծ** |
| **1.1** | **Արժույթ** | ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո | | |
| **1.2** | **Տարեկան անվանական տոկոսադրույք** | **ՀՀ դրամ** | **16%** | 16% |
| | | **ԱՄՆ դոլար** | **13%** | 13% |
| | | **Եվրո** | **12%** | 12% |
| **1.3** | **Տարեկան փաստացի տոկոսադրույք** | 17.95%-21.99% | | |
| **1.4** | **Վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվեգրվող տոկոսադրույք (տարեկան)** | - | | 1.0% |
| **1.5** | **Ժամկետ (ամիս)** | 2-60 | | 2-24 |
| **1.6** | **Արտոնյալ ժամանակահատված** | 2-4 ամիս (սեզոնային բիզնեսների համար) միայն տոկոսներ մարելու հնարավորությամբ | | - |
| **1.7** | **Մարման եղանակ** | Տոկոսների, մայր գումարի մարումները՝ ամենամսյա, մայր գումարի մարումները՝ կախված բիզնեսի անձնահատկություններից | | Տոկոսները՝ ամենամսյա, Ժամկետի կեսից սահմանել մայր գումարի հավասարաչափ մարումներ |
| **1.8** | **Տոկոսադրույքի հաշվարկման կարգ** | Անուիտետային (ճկուն գրաֆիկ) | | Նվազող մնացորդի նկատմամբ |
| **1.9** | **Նվազագույն գումար** (ներառյալ փոխկապակցված ընկերությունների և անձանց խումբը, ինչպես նաև վարկառուի և փոխկապակցված անձանց խմբի ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ում գործող անգրավ վարկերի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 11 մլն. ՀՀ դրամը, իսկ փոքր բիզնեսի վարկատեսակների մասով 7 մլն. ՀՀ դրամը) | **ՀՀ դրամ** | 200,000 | |
| | | **ԱՄՆ դոլար** | 400 | |
| | | **Եվրո** | 400 | |

| | | | |
|---|---|---|---|
| 1.10 | **Առավելագույն գումար** (ներառյալ փոխկապակցված ընկերությունների և անձանց խումբը, ինչպես նաև վարկառուի և փոխկապակցված անձանց խմբի ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ում գործող անգրավ վարկերի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 11 մլն. ՀՀ դրամը, իսկ փոքր բիզնեսի վարկատեսակների մասով 7 մլն. ՀՀ դրամը) | **ՀՀ դրամ** | 7,000,000 |
| | | **ԱՄՆ դոլար** | 15,000 |
| | | **Եվրո** | 13,000 |
| 1.11 | **Վարկի նպատակ** | Ավտոմեքենայի ձեռքբերում | |
| 1.12 | **Վարկի տրամադրման եղանակը** | Անկանխիկ՝ բանկում բացված հաշվի միջոցով | |
| 1.13 | **Վաղաժամկետ մարման վճար** | Վարկի սպասարկման ժամկետի 1/2 –ից շուտ վարկի ամբողջական մարման դեպքում կիրառել 2% | |
| 1.14 | **Մարման գրաֆիկի հետաձգում** | Յուրաքանչյուր տարի մեկ անգամ հաճախորդը ունի հնարավորություն ամսական մարումը հետաձգել՝ լրացուցիչ վճարելով հետաձգվող ամսվա համար նախատեսված մարման (մայր գումար և տոկոսները ներառյալ) 10%-ը | |
| 2 | **Բանկի միջնորդավճար** | | |
| 2.1 | **Դիմում հայտի ուսումնասիրության վճար** | Չի կիրառվում | |
| 2.2 | **Սպասարկման միանվագ միջնորդավճար** | Պայմանագրային գումարի 2% | |
| 2.3 | **Վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար** | Համաձայն հաշվից միջոցների կանխիկացման Բանկում գործող սակագների | |
| 2.4 | **Հաշվի բացում** | Համաձայն Բանկում գործող սակագների | |
| 3 | **Ապահովվածություն** | | |

| | | |
|---|---|---|
| **3.1** | **Ապահովվածություն** | **Երաշխավորություն նվազագույնը 2 անձի, ընդ որում**<br>• Երաշխավորիներից մեկը պետք է հանդիսանա Անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ վերջինիս ընտանիքի անդամ (բացակայության դեպքում այլ ազգակցական կապ ունեցող անձ), իսկ մյուսը՝ երրորդ անձ (ֆինանսական երաշխավոր), ինչպես նաև առկայության դեպքում բիզնեսի իրական շահառուն<br>• Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ տնօրենը և 50 % և ավել փայամասնություն ունեցող անձիք, բիզնեսի իրական շահառուի ընտանիքի անդամ (բացակայության դեպքում այլ ազգակցական կապ ունեցող անձ) և երրորդ անձ ֆինանսական երաշխավոր, ինչպես նաև առկայության դեպքում բիզնեսի իրական շահառուն<br>Վարկը ստանալուց հետո առավելագույնը չորսամսյա ժամկետում հաճախորդն ձեռքբերված ավտոմեքենան պարտավորվում է ձևակերպել որպես ապահովվման միջոց, և գործարքի իրականացումից հետո ֆինանսական երաշխավոր անձն վարկի սպասարկումից 12 ամսվա ընթացքում այլևս չի հանդիսանալու որպես երաշխավոր (բացառությամբ եթե վարկ/գրավ հարաբերակցությունը (ավտոմեքենայի գնահատված լիկվիդացիոն արժեքից) առավել է քան 100% ապա ֆինանսական երաշխավորությոնը դադարեցվում է այն ժամանակ երբ վարկի մնացորդ/գրավ հարաբերակցությունը (հաշվարկված լիկվիդացիոն արժեքից կկազմի 100%) |
| **3.2** | **Գրավադրվող գույքի նկարագրություն** | Գրավի առարկա է հանդիսանում ձեռքբերվող տրանսպորտային միջոցը, որի արտադրման ամսաթիվը մինչև 10 տարի է (շինարարական տեխնիկայի ձեռքբերման դեպքում հնարավոր է մինչև 15) |
| **3.3** | **Վարկ/գրավ հարաբերակցություն** | Գրավադրվող ավտոմեքենայի լիկվիդացիոն արժեքի 100% |

| | | |
|---|---|---|
| 3.4 | **Գրավադրվող տրանսպորտային միջոցի գնահատում** | 1. Ավտոսրահից ձեռքբերվող տրանսպրտային միջոցի գնահատում չի իրականացվում: Որպես գրավադրման արժեք հիմք է ընդունվում ավտոմեքենա իրացնող ընկերությունների կողմից հաճախորդին տրված տեղեկանքում/պայմանագրում նշված արժեքը<br>2. Երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում գնահատում իրականացնում Բանկի հետ համագործակցող համապատասխան գնահատող ընկերությունը |
| 3.5 | **Գրավադրվող գույքի ապահովագրություն** | Գրավադրվող տրանսպորտային միջոցի ապահովագրությունն իրականացվում է Բանկի կողմից վարկի ամբողջ ժամկետի ընթացքում վարկի մնացորդի չափով |
| 4 | **Վարկառուի նկատմամբ պահանջներ** | |
| 4.1 | **Վարկառու** | ՀՀ ում և ԱՀ-ում գրանցված Անհատ Ձեռնարկատեր կամ Իրավաբանական անձ |
| 4.2 | **Վարկառուին ներկայացվող պահանջներ** | • Տարիքը՝ 23-65 ներառյալ վարկի ժամկետը (Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում տնօրենի և 50 % և ավել փայամասնություն ունեցող  հիմնադիրների)<br>• Առնվազն 6 ամսվա փաստացի և գրանցված գործունեություն<br>• Դրական վարկային պատմություն՝ համաձայն Բանկի պահանջների<br>• Վարկունակության ստուգում՝ համաձայն Բանկի պահանջների |
| 5 | **Երաշխավորին ներկայացվող պահանջներ** | |
| 5.1 | **Երաշխավոր** | ՀՀ ում և ԱՀ-ում գրանցված ֆիզիկական, ԱՁ կամ իրավաբանական անձ |
| 5.2 | **Ֆինանսական երաշխավորին ներկայացվող պահանջներ** | • Տարիքը՝ 21-65 (ֆիզիկական անձ)<br>• Առնվազն 6 ամսվա փաստացի և գրանցված գործունեություն (բիզնես գործունեություն իրականացնող երաշխավորի դեպքում)<br>• Դրական վարկային պատմություն՝ համաձայն Բանկի պահանջների<br>• Գրանցված եկամուտի կամ սեփական անշարժ գույքի առկայություն |
| 6 | **Լրացուցիչ պայմաններ** | |

| | | |
|---|---|---|
| **6.1** | **Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ** | Վարկային փաթեթն ամբողջությամբ ներկայացնելուց հետո 7 աշխատանքային ժամ -2 աշխատանքային օր |
| **6.2** | **Ֆինանսական վերլուծություն** | Առանց ֆինանսական վերլուծության |
| **6.3** | **Վարկի ոչ նպատակային օգտագործում** | Գործող տոկոսդրույք +4% |
| **6.4** | **Ժամկետանց գումարի տոկոսադրույք** | ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկ |
| **6.5** | **Վարկի սահմանաչափի նախնական հաստատում (մեկամսյա ժամկետ)** | 10,000 ՀՀ դրամ |
| **6.6** | **Ժամկետանց տոկոսի տույժ** | 0,13% |
| **6.7** | **Վարկի ձևակերպման վայր** | Բանկի բոլոր մասնաճյուղերում (բացառությամբ Արարատյան, Արշակունի, Չարբախ և Արաբկիր մասնաճյուղերի) |

**Փաստաթղթերի ցանկ**

<u>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ վարկը հաստատելու համար</u>

1. Վարկային դիմում-հայտ.
2. Անձը հաստատող փաստաթղթեր-ԱՁ-ի, տնօրենի, հիմնադիրների, փոխկապակցված անձանց անձնագրերի, սոցիալական քարտի, ID քարտի պատճենները.
3. Պետռեգիստրի գրանցման վկայականի, կանոնադրության (իրավաբանական անձի), ՀՎՀՀ (առկայության դեպքում) պատճենները.
4. ԱՁ-ի, փոխկապակցված անձանց սեփականատերերի/բաժնետերերի ամուսնու (առկայության դեպքում) անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնության վկայական, վարկառուի ամուսնու մահվան դեպքում՝ ամուսնության և մահվան վկայականները, ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության վկայականը (ըստ անհրաժեշտության).
5. Իրավաբանական անձանց դեպքում ընդհանուր ժողովի որոշումը.
6. Հարկային հաշվետվություններ (շահութահարկ, ԱԱՀ, շրջանառության հարկ, արտոնագրված, հաստատագրված և այլն) վերջին 1 տարվա կտրվածքով՝ ընդ որում, եթե գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա ներկայացված տեղեկատվությունը պահանջվում է առկա ժամանակահատվածի համար.
7. Լիցենզիա (եթե գործունեությունն օրենքով նախատեսում է լիցենզավորում).
8. Գործունեության վայրի վարձակալության պայմանագիր կամ սեփականության վկայական (վարձակալության պայմանագիրը առկայության դեպքում).
9. ՀԴՄ կտրոն կամ հաշիվ ապրանքագիր (առավելագույնը 15 օրվա վաղեմության, եթե ՀՀ օրենքը այլ փաստաթուղթ չի սահամում).
10. Բիզնես գործունեության վայրի նկարները ներառյալ նկարներ դրսից.

11. Լիազորված անձի դեպքում անձնագիրը և լիազորագիրը՝ ԱՔՌԱ հարցում անելու համաձայնության նշումով.
12. Այլ փաստաթղթեր ըստ անհրաժեշտության:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ ֆինանսական երաշխավորի համար

- Դիմում հայտ.
- Երաշխավորի անձը հաստատող փաստաթղթեր.
- Իրավաբանական անձի դեպքում ԱՁ-ի, տնօրենի, հիմնադիրների, փոխկապակցված անձանց անձնագրերի, սոցիալական քարտի, ID քարտերի պատճենները.
- Իրավաբանական անձանց դեպքում ընդհանուր ժողովի որոշումը.
- Պետ. ռեգիստրից քաղվածք կանոնադրությունում փոփոխությունների վերաբերյալ.
- Իրավաբանական անձի դեպքում վերջին 6 ամիսների հարկային հաշվետվություններ.
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության "Նորք տեղեկատվավերլուծական կենտրոն" ՓԲԸ-ի կողմից տեղեկատվության բացակայության դեպքում իրականացվում է ֆինանսական երաշխավորի եկամուտը հաստաատող փաստաթղթերիԵրաշխավորի սեփականություն հանդիսացող գույքի սեփականության վկայականը:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ ֆինանսական երաշխավորի համար

- Դիմում հայտ.
- Երաշխավորի անձը հաստատող փաստաթղթեր.
- Իրավաբանական անձի դեպքում ԱՁ-ի, տնօրենի, հիմնադիրների, փոխկապակցված անձանց անձնագրերի, սոցիալական քարտի, ID քարտերի պատճենները.
- Իրավաբանական անձանց դեպքում ընդհանուր ժողովի որոշումը.
- Պետ. ռեգիստրից քաղվածք կանոնադրությունում փոփոխությունների վերաբերյալ.
- Իրավաբանական անձի դեպքում վերջին 6 ամիսների հարկային հաշվետվություններ
- Անհրաժեշտության դեպքում կարող է կատարվել երաշխավորի եկամուտը հաստաատող փաստաթղթի հարցում.
- Երաշխավորի սեփականություն հանդիսացող գույքի սեփականության վկայականը:

*ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՄԻՆՉԵՎ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ : ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ :*

Համաձայն "ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ
Վարչության 23.05.2019 թ. Որոշման
Գործում է 01.07.2019թ.-ականից

*ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

Տեղեկացնում ենք,որ

- եթե վարկառուն չկատարի պարտավորությունները,ապա Դուք եք վճարելու իր փոխարեն,վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից,
- Ձեզ տրամադրվելու է վարկային ,երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ,
- Հաղորդակցումն իրականացվում է Ձեր կողմից ընտրված եղանակով,
- 7 օր առաջ ծանուցվելու եք պայմանագր պայմանների փոփոխության մասին,
- 1 օր առաջ հիշեցում է ուղարկվելու առկա պարտավորությունների վերաբերյալ,
- Վարկի մարման ուշացման դեպքում ամենաուշը 1 օր հետո Ձեզ տեղեկացնելու են այդ մասին:

ԵՐԱՇԽԱՎՈՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին
- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները,ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

**Քաղվածքների,դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները ,ժամկետները և սակագները՝ համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագների:**

## ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ :

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ : ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ : ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ԱՅՍՏԵՂ

- **Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև**
- **Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հիմք ընդունելով հետևյալ բանաձևը՝**

$$A = \sum_{n-1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i-տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR)

A-տրամադրվող վարկի սկզբնական գումար

n- վարկի մարմանն ուղղված վճարի թիվ

N-վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվ

Kn- վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումար

Dn- վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ : ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է : ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24//7 ՌԵԺԻՄՈՎ ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ :

Ձեր ֆինանսական տեղեկատուն՛՛ համակարգին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ www.fininfo.am: